



ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

1843-1899 ➔ ՀԱՏՈՐ ՄԷ ➔ ՓԵՏՐՈՒԱՐ

ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

ՆԻ ԻՒՐ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՄԷՆ ՆՄՈՅԵՆ

(Շար. տես 'յէջ 18)

ԱՆԱՆԻԱ ԳՐԱԿԱՆ այս տեղեկութիւններս ըստ բաւականի որոշ գաղափար մի տունին մեզ՝ Անանիայի իբրեւ գործունէայ և մեծ մարդու մասին. այժմ կը հարցունի բնականապէս, թէ ի՞նչ գործեց այդ արդեօք և՛ իբր գրագէտ։ Սիւնեաց պատմիչն՝ ոչ միայն աշակերտ Մեսրոպայ, այլ և քարգմանիչ տիտղոսով կը յիշէ զԱնանիա։ Դիտելով որ այդ տիտղոսը մեր դասական հէ-ղինակացմէ անոնց միայն տրուած է, որոնք թարգմանաբար և ինքնագիր երկասիրութիւններով ծանօթ էին¹, կրնայ ըսուիլ որ Անանիա ևս այլևայլ գրական գործեր արտագրած ըլլայ երբեմն՝ կրկին տեսակէ, որոց առաինները զոհ եղած են անշուշտ համայնաձայն ժամանակին. իսկ վերջիններն այլ անստուգութեան քօղի տակ ծածկուած մնացեր այն հարկերաւոր թարգմա-

նութեանց հետ, որոց թարգմանողներն փոյթ չէին տանիր, ժամանակին եղբրեղի սովորու-թեան համաձայն, իրենց անուանքը գրողմէ ի վերայ։ Անանիայի գործակցութեամբ եղած թարգմանութիւնքը՝ նորա ինքնագիր գրչի և գրուածոց ձեւքով միայն կարելի էր որոշել. սակայն ասով իսկ բազմը գծնէայ գտնուած է առ Անանիա։ Թէև ուշիմք արդ Անանիա մա-կագրութեամբ մի քանի գրուածներ, զորս յիշած է Հ. Գ. Ջարբհանաւրեան իւր Հայոց գը-պրութեան պատմութեան գործին մէջ, բայց որովհետև ի-ժի, զար բազմաթիւ Անանիաներ եղած են՝ և բաւական գրիչ և հօշակ ունեցող, հետեւաբար այդ գրուածներն իսկ կարող էին փոփոխակի երբեմն այս և երբեմն այն Անա-նիայի արուիլ, ինչպէս իբրք այլ տրուած են²։

1. Օրինակ իմ, Գր. Նարեկացի, Ներսէս Շնորհալի և լատերոնացի իսկ այդ պատճառաւ. թարգմանիչք յոր-նորուած են յազգէս, և թարգմանիչաց ինտ տնուած, թէպէտև զարեբու. մեծ խորոցով լեռի կ'ազդէին ա-նոնցմէ։ Երկրորդ, թարգմանիչ՝ զբն իսկ կը նշանա-կէ հին լայերեքի մէջ։

2. Օրինակի աղաքաւ, ի խնդրոյ Գրիգորի միայնա-

կեցի մի գրուած՝ Յաղագս զղջմամ և արտասուաց ճառի, զոր Հ. Գ. Տաշեան (տես ճոցարկ. Զնո. էջ 1057) Անանիա Շիրակացոյն գործոց մէջ դասած է, իբրք մի ուրիշ Անանիայի, այն է Նարեկայ վանահօրն է, վասն զի ինչ ինչ տարբերութեամբ նոյն դասոյց 1898ի Պատկերի (թիւ 8, 9, 10, 11, 12, 13) մէջ հրա-տարակուածին ինտ. և էջմիածնի թիւ 914 ճարտարի

Գործակալ, ինչպէս է գարուն՝ Սէրէոս, այսպէս այլ ժի գարուն՝ եղած են Սարգիս Ենորճաթի և ուրիշների, որոնք է գարուն լեզուի նմանորում թեմայ գրումաներ շարագրած են, որով նոր գծաւարութիւն մ'են կ'աւելնայ՝ հինը նորին զանազանելու մասին: Սակայն ինչպէս արժանի մէջ արժանի է թէն ոսկեգոծուն, այսպէս այլ մէկէն աւելի առանձնաշատութիւններ կան, որովք արժանի գարուն գրուած մի կը զանա- դանի ոսկեգարուններ: Արդ, քննադատութեան փորձաքարն են յնշնելով բոլոր վերլուծելու գը- րուածները՝ մին միայն և այն իսկ վերապահու- թեամբ՝ ոսկեղէն գարուն և գրել ծնունդ կենայ համարուել, և հետեւագար արժանաւոր Անանիա Թարգմանչիյն որ կը կրէ հետեւեալ խորագիրը. « Երանելոյն Անանիայի Հայոց Կայսրապետի » ի խորհրդով Յովնանոս մարգարէի. « Յաղագս Յովնանոս » հակիրճ և համառօտ բանիւ անց- ցուք »: Այդ, այս ճառս թէ լեզուի համեմա- տաբար յայտակարարութեամբ և կորովով, և թէ զաղափարայ բարձրութեամբն և պայ- հառութեամբն՝ անհամեմատ կերպով միաները կը գերազանցել, թէն հետեւ է երիցագոյն Թարգ- մանչաց յատկութիւններէն:

Երբ Տոկապետճառներէն միոյն մէջ, անանուն ոք՝ Յովնանոս յիշատակին առթիւն այս ճառս համառօտելով՝ Անանիայի անունը « երանելի » տիկորոսով զուգած է՝ Սակերերանի և Եփրեմի անունանց հետ, իբրեւ ընդհանուր մակագրու- թիւն, թէպէտ ևս խմբագրութիւն ընդհանրա-

պէս Անանիայի յիշեալ ճառէն քաղուած է: Անշուշտ խմբագրողն այսպէս վարուելով՝ ու- ղած է ցոյց տալ, թէ այդ երբեք վարդապետ ներու ճառերէն քաղած է զայն. սակայն անըք կարող ենք ասիլ մի ուրիշ փաստ ևս յառաջ բերել. այսինքն թէ, Հայագրի վարդապետի՝ իւր հնուութեան և ժամանակակա անոնց մերձաւոր լի- նելուն պատճառաւ է, որ երանելի տիկորոսով յարգուած և միւս Հարց հետ զուգարար յի- շուած է: Եւ յիշուել, միւս Անանիաներէն ոչ միայն այդ տիկորոս տրուած չէ:

Երբ ժի Ճարտնոիրն, որ ընդգրկուած է Պարիսոս ազգային գրաստան թիւ 48 հին ձե- ւագրէն, կ'ընծայէ մեզ մի այլ գեղեցիկ ճառ՝ հետեւեալ մակագրով. « Յաղագս Յովնանոս Միկոյտի, Անանիայի վարդապետի ասացեալ. Ի մեն ասեալ լիմասա » Հոգւոյն ձեռն- տուութեամբ »: Այս ճառս իսկ՝ իւր յատակ շարաբանութեամբն և խորիմաստ վարդապե- տութեամբն՝ Յովնանոս մարգարէին վրայ գը- րուածէն ետքը՝ ընտրելագոյնն է, ըստ իս, բոլոր նախալիշեալ գրուածներէն, այնպէս որ ես չկա- ռնեալով միւս Անանիաներէն միայն յատուկ համարել, կ'սխործիմ վերապահութեամբ Սիւ- նեցի Թարգմանչին վերագրել է զայս: Եւ առու- գիւ, քայ ի ոճէն՝ վարդապետական տեսակետով իսկ շատ նմանութիւններ ունի այս ճառս ա- ռայնոյն հետ. և ինչպէս առաջնոյն հեղինակին՝ այսպէս և ասոր սերելի և ընտելական և Փիլոն երբայեցին, ուսկից կոչում մ'են կ'ընէ, բանին

մէջ իսկ իբրց Ան. Կարեկացւոյ անունը կը կրէ: Երբ մասնակցաբանի թիւ 57 զբարբի (Ա. Ուսկիւ.) մէջ, Անանիա վարդապետի ամացեալ իրատ հոգիւյան ի վրայ արիմարիկոյ գաշխարհ. « Արդ եթէ կա- միս »: այսպէս մի ուրիշ զբարբի՝ Անանիայի վար- դապետի՝ ասացեալ վասն անցաւոր աշխարհիս, խո- րագրուած երկու ճառերի՝ թէպէտ և արտապահու- տաբար է՝ երկին, սակայն ըստ իսկութեան յարաու- թիւնը են Կարեկացւոյ յիշեալ ճառի, ինչ ինչ յաւե- լուածով և յապաւուսեցով, որք կատարած են ազեալ արշի զի ձեռքով՝ ի սխալագրութեամբ Կարեկաց- լայն է, ըստ իս, նաև մեր թիւ 1108, այն է ԻՋ Ոսկե- փորեկի մէջ, Անանիայի Հայոց վարդապետի ասա- ցեալ՝ իրատ քանամայից. « Արդ քանամայական ա- տիկան » մակագրուածն. զի ճառիս լեզուն և ոճն նոյն է Յաղագս զբլման, և այլն, ճառի լեզուին և ոճերու նաև, նա մասնաւոր երկուքին մէջ ևս որ զերանունը ստեղծ զործածուած է զի, որպէս զի չաղեպաներու նշանակութեամբ: Այսպէս նաև իոսպ և խրատը յա- լտեմնակամը, որ սոսմի կ'իման յալտեմնակամս. « Փառնի զբլման և և պատուիրեալ » — խորհուրդ կա- տարման Առաքելով գիտորդի. « Իսկ երանելին Պե- տրոս », — և ի յալտիւլթիմ գիտորդի, որ կը սկսի. « Իսկ Պետրոս երկրորդ » ճառերով՝ նոյնպէս Անանիայի մակագրուած են, քայց ճառերէն Երեմիական են և օտար ճառերը Թարգմանագար յերկրական յիշորդիմի ի ստըք կարծիքէ կենդիցի՝ Հ. Տաշեան՝ Ան. Կարե- կացւոյ զործող մէջ նշանակած է. քայց կ'իմանուս պատ- մին (տպ. ի վէնետիկ 1865, էջ 64) Սառահեղեցի կու ապ արշալի: Յերաթ, այս ճառիս ճոխ և ճոռոն լեզուն թէ Ան. Կարեկացւոյ և թէ Սառահեղեցի մեզ ծանօթ գրուածը լեզուն և ոճն բոլորովն կը տարբը-

րի: Ես Գր. Կարեկացւոյ ասելի պիտի ապի զայն, իմէ « Անանիայ Փիլիսոփայի » մակագրուած լինէր որոշակի. վասն զի անոր ազգեցութեան բնագոյնը կը կրէ իւր վրայ. և նաեւագար, Գրիգորէն վերջ ապրող և զրոյց Ան. Սառահեղեցի ասելի վերագրուած է, քան թէ Կարեկացւոյ կամ Երեմիական, որոնք յառաջ լինելով զան Գրիգոր, անոր ազգեցութենէն իսկ ա- զատ էին: Վասն խոմարիտութեան ճառը՝ Հ. Տաշեան՝ Ան. Սառահեղեցի ընծայած է, իւր յիշեալ զործին մէջ. քայց մեր թիւ 57 զբարբի են Ան. Երեմիական յարագրուած է: Ըստ իս՝ ոչ միայն և ոչ այլ միայն արժանաւոր գրուած մ'է. այլ կամ Տերուայ Հոր Անա- նիային ըստ և և կամ Անաստասցոյն: Ան. Սա- րահեղեցի են Սակ ամիրտի Բարդուղիւյ, — վասն մոծի հիմզալացանիմ, — վասն ապակամացու ա- սողով զմարիմ Տեառն, — Առ մերթնացիսյսմ, — վասն պատիեղարար տաւամբ, — վասն տողովոր Զաղկեղոմի, — վասն բաժսմման վրաց, — վասն չորից ամրոտի, — վասն մեղոմի, — վասն քա- յարջիմ, — վասն տոմի ղեմըմման ճիւղսման, — և Գաւտման երկը սրբապաշտութեան, զոր Հայք ի դէմս որդւոյ ասմի, 11 ճառեր, որք կը գտնուեն մեր թիւ 50 հին և ընտիր ձեռագրէն մէջ, խորովկայ և Բով. Սարգիսազ վարդապետի ճառերուն հետ, տառաք տառաքելի Անանիա Սառահեղեցի են, թէպէտ և անց զաղափարով Բով. Եղեպատ՝ զարդապետ Անա- նիա կը գըն, տառաք Սառահեղեցի վերագրել: Անանիա Երեմիական զործերն արդէն ծանօթ են Գ. Պապեա- նեանի և այլոց նրատարգմութեամբ (տպ. Հ. Տա- շեանի Յուլյանոյ մէջ, իմ 1057): Այս մասնակութիւնը դիտարկել զրիւք, միակեղծ ընդ միշտ չփոխութիւն ներք վերցնելու նախա-

վրայ խոսած ժամանակ, Յօզուածս չի ներեր երկարորեն խոսել այս ճառի մասին. բայց այսչափ միայն գիտել հու տամ, որ Թէպէտև արտաքսական ներքողմանի երևոյթ ռնին, բայց ծայրէ ծայր կարգադրով զայն, դուք ինչ կ'սկսուէք, որ դա մասն ըլլայ Յովհաննու աւետարանի Ա զլիւռ Միննոքնքան մի, իսկ Թէ կործնէալ մեկնութիւնն արդեօք Անանիոս ինքնին երկաւ սիրած է, Թէ Ոսկեբերանեն Թարգմանած, այս գծուար է որոշել, քանի որ Ոսկեբերանի մեկնութեան հայերէն Թարգմանութիւնն ձեռքերնիս հասած չէ: Յամենայն դէպս, անհաւանաւան չէ, որ Անանիա կամ մեկնիչ եղած ըլլայ Յովհաննու Աւետարանին և կամ Թարգմանիչ անոր Մեկնութեանն, եթէ ստուգուի ճառիս հարազատութիւնը:

Գալով զարձակ մեր առաջին նիւթին, այն է՝ ի խորհուրդ Յովնանոս մարգարիի խորազրուած ճառին, որ առիթ տուաւ մեր այս յօդուածին, կ'ըսենք, որ բոլորովին ինչ տարբեր Ս. Եփրեմի կործնած Յարազս Յովնանոս և Միննոքնքաց խորագրուած ճառին, և Փիլոն եբրայեցւոյ Յարազս Յովնանոս ճառին չէտ աւերակից թողցատուր: Սկսեալէն է Եփրեմի՝ իւր բանաստեղծական նկարագրութեանց մէջ, որոնք կ'աղբ է ըսել, Թերեւ շափազանք և անբնական իսկ կ'երթին ինձ, ինչպէս Փիլոնն այլ սքանչելի է իւրայիւրեան ազգին և անոր նախախնամող Ա. տուածոյ մասին բրած այլաբանական աեսութիւն, ինքովն. իսկ Անանիա՝ կրնաք ըսել Թէ, չին և նոր օրինաց խորհրդաւոր վարդապետութեանց պարունակութեանք՝ երկուքն իսկ ընտրելազայն է, օգտակարազայն, և իր ասական մէջ գեղազանց, Հայագիւր վագապետ՝ երկու մասի բաժնած է այդ համառօտ՝ բայց ամենահիշեթեղ մարտ: Առանցիկ մէջ, — յետ հակիրճ ներածութեան մի՝ յորտեմ պարզուած է մարգարէին՝ աւ Միննոքնքայն առաքելութեան խորին խորհուրդ, — ինչ նկարագրէ Թոյնանոս՝ կրտսի փորին մէջ իբրէ և Թագաւորական կառս բազմեն և ծովու Թագաւորութեան մէջ շրջին, անոր պաշտօնով անցնիցող և խաւարի բոլոր գաղտնիքը տեսնելն և բերանալն ի խորդ առ

Բարձրեալ աղութելն, նկատելով յայտմաննայնի զՅովնան իւր օրինակ Արամայ և պատմական օրինաց ներքև: իսկ երկրորդ մասին մէջ՝ կը նկարագրէ զգիտատական մարգարէն իբրև օրհնակ Յիսուսի՝ Գրիգորոսի, կամ անոր փրկելութիւնագործ օրինաց և տնօրէնութեանց հետ, հանդերձ զուգակշռութեամբ ծածկեալ խորհրդոյց, Այս ամենայն՝ բարդաւաճած է նա աւմենաբնական, խիստ փոքր և անսովոր գրելով, ուստի կրնանք դատել իրաւամբ, Թէ նա՝ Ս. Գրոց և արտաքնոց գիտութեամբ ներկուս մէկն էր, և ունէր ամենաբարձր գաղափարներն անգամ սղաղուններէ բացատրելու գիւրթութեք և կորովի լեզու մի:

Չնայելով որ այս ճառս իւր ներքին ծրագրովն և ուղղութեամբ՝ Փիլոնի յիշեալ ճառին բոլորովին անկասկ և ինքնուրոյն գործ է, սակայն և այնպէս բաղդատելով իրարու չէտ գտնուէցան այլևայլ նման տեղեր: Այնու աւելի ուշագրաւ են այս տեղերէն շատերը, զի ամբողջութեան աւելի՝ բառերու, բացատրութեանց և գաղափարի նյութութիւն յոյշ կու տան. յորոյ կրնանք հետեւցնել, Թէ դա՛ւս Անանիայի կողմէն եղած նիւթական և նպատակաւոր փոխառութիւններ չեն, այլ ընտելական և մի ուրիշ գործողութեան բնական արգասիք, այսինքն Թէ, եղած լինելով նա Թարգմանող Փիլոնի գրոյց և յետոյ յօրինելով իւր այդ ճառը՝ բնականապէս Փիլոնի գաղափարներու չէտ անոր Թարգմանութեան մէջ նախապէս գործածած իր բառերն և բացատրութիւնք իսկ՝ իբրև ընդհանրական մի բան՝ վերանոր յեղեղեալ և աստ և անդ: Ստուգելով, այսպիսի մի եղելութեան, — այսինքն՝ Թարգմանական և ինքնագիր գրուածոյ նմանաբանութեանց, — յայտնի օրինակներ տուած են մեզ նոյն իսկ խորհուրդի, Գործին և ուրիշներ իսկ, ուստի երկբայեղա պատճառ չկայ: Արդ, մեկնաբանական աեսակէտերով իսկ յոյժ չէտ բարբաբական այս ճառիս ամբողջական հրատարակութիւնը, կը Թողուք սուսննին Թերթի մի. այժմ՝ կը բաւականանանք չոս միայն մի քանի չափածատուութեանց մեղքով՝ մեր ըսածն ապացուցանել:

1. Որուն հայերէն Թարգմանութիւնը Թէպէտև ընդունուած է իբրեք գործ ի գարտ, բայց յայտմ գործածուած մեր զասական արարքով՝ մեծապէս կը տարբերի նոյն զարտ Տարտեղի և Արարաբիքի գրողներու արարքանով: Մեք չենք կարող առ այժմ հաստատել, Թէ դա Արեւեաց գաւառաբարբան ըլլայ, քանի որ լուսնից որոյ տեղեկութիւն այն գարտն մէջ այդ նախնորում խոստած գաւառաբարբան մասին, բայց այս յայտնի է, Թէ այգալիսի գաւառաբարբանութիւնը կային և ինչ տեսութիւն իսկ մեր գաւառի մասնաւորաց չով: Այս մասին մասնաւոր ուսումնասիրութիւններ եղած չեն մինչև յայտար, բայց Ս. Կարապետաւարցի, Արարտ և Մովսէս Միննոքնքաց գործածած ինքնիւրեմ ունին միւս գաւառաբի գրուածներէն բաւականաչափ տարբերութիւններ, և ատոր կը նպաստեն:

2. Որեանք ինն, ուղղով ինն կրտսիսուն յարազոց բերել Գրիգորոսի զորին՝ Աւագան զրոյ ԺԺ. 9-10 մէկ տեղին, կը զեն: Շնորհ և Մովսէս նկարագրեաց

յերկուս նոխագան վիճակեալս, մին՝ Տեառն, և մի՝ Ազգայիլ, այսինքն՝ քարկոթիմ Աստուծոյ. որ և Տեառն երանք լիճակ՝ ապանեալ լինել. իսկ Ազգայիլ՝ ապանեալ. կայսիւր ի Սա որդաւ կարմիր, և արձանից յանդիս անապատ. և ամը կերակրելը գերաւորութիւն երկրին զամ ռոյնոյն, անգմաս պանդիլ զպապանց. և ի կատարել ամի՞ զառնայր ամորէն ի բանալմ՝ սպիտակացիւր և լուսնայն ստուար մարդիս, և կարմրութիւն որդանն ի Յոյժ սպիտակութիւն փոխարկեալ, որպէս ասե Նայի: Եթէ ինքն մեղ էր, և այլ: Կարողաւած ատրելն այնպիսի նորութիւններն են, որոնք Նովմանաւոր Թարգմանութեան մէջ չտան անգամ չկայ: Ե չեմ կարծիր որ Նայիլին վերջը բերուած օրինակին կանխապէս չէտ Թարգմանութեան ըլլայ: զի իս Ազգայիլ բնուս վերջուած չէ: Ուստի կամ Որդոյնիսպ աստեղանդը ինքնեան օրինակի մի տարբերութիւն ըլլալու է այդ, և կամ մի այլ անտեսիմ աղբերէ:

« Եւ ի՞նչ է խորշ մի նաւին՝ ի խոր քուն թանձրութեան ննջէր, խաւարազգած խորհրդով պարապնդեալ ի մահի՞նս... և հազաք չնչոյն ի սրտմտքներէն բանձրացեալ՝ չնոր զանց շնչերակացն, և ընդ նորագոյն փողոցս երկուց ծծուցն անկեալով՝ յարտափայլէն սուշէր, յանդիմանեալ ի խղճէ մտացն »:

« Այլ մատուցեալ նաւաստիքն գարրոցանէն զնա... տեսնալ Յովնան գլուտակոշտն աշեսցն, և զսաստիկ քոչք ձկերայնոյն՝ պատեալ ահա. զիկն մայրամար, բութնեալ անփայլելի՝ գմարգարէն փախոցեալ »:

« Եւ տեսնալ նաւաստեացն զխտովորչան ծովուն, ոչ ըստ սովորութեան յուզեալ հող-ժոցն սաստկութեան, և իմացեալ թէ վասն մեղացն յոչիկն ալիք ծովուն, սխսան հար. ցարկնորչան առնել ի մէջ իւրեանց: Փան առ մարգարէն, քննել թէ ոչստի, կամ յո՞ երրայ. և իմացեալ զսպասմանքնորչան մարգարիկն, կարգեցիկն առնան և նաւն՝ էր իբրեւ զեւծ գաւառաւորաց. ծովն՝ իբրեւ ոռո՞ր՝ նշմամբ աշեսցն զատախազ լինել, յայտնաւ զյանցանս մարգարէն. հողմուքն՝ իբրեւ զգահիճս պատրաստելին ի սպանութեան »:

« Իսկ նաւավարքն ոչ իբրեւ զանմարդիս՝ յամբոյս (՞) հաստակելն զվճիտ մահուն, այլ իբրեւ մարդասէրս՝ քաղաւ՝ քննորչանքն ի վիճակաւ յայտնելին զյանցանս մարգարիկն »:

« Չոր առեալ կիստսին՝ եր ի բանդի յորդ. վայնի իւրով, իբրեւ յանրմունքի մետաղ... Արդ՝ ի՞նչ է Եօֆան ի պորտ ձկանն իբրեւ պղնձի պարսպոց շնոր փակեալ կարծրագոյն կողիւք վիշապն, և ձեղուն յարկին՝ քան զերկալ կարծրագոյն ի վերայ հաստատեալ... Արդ առեալ կիստսին զԵօֆան շրջեցուցանէր ընդ առմնայն խորշս անշնչոց, իբրեւ կառք եղեալ քաղաւորի, զի ցուցչէ և անշ զհրաշալի գործն Աստուծոյ, և ամենայն կէտք և կայսաւք՝ որ ի խորշս ծովուն տեղեւք սահմանեալ՝ ընդ առաջ ելեալ Յովնանու իբրեւ Թագաւորի, և յուզարկելն ի միւս խոր »:

« Եւ մարգարէն՝ իբրեւ ընդ քանք ապակոյ՝ ընդ ալս կիստսին տեսներ զանժամեծս Աստուծոյ »:

« Եւ ապա անեալ անցուցանէր մեծն կիստս զմարգարէն յակն ծովուն, որ յանդեղոց հոսէր սաստիկորչանով ի վեր եււով, յորոյ վերայ անեալ նստեր. և զերպոյթն ներքնայն՝ զլա. փառարն բողոյր ի վեր, զի մի ելեալ յորձանցն անկափորեան՝ ծածկեցեք զերկի... »:

Էջ 583. « Քանդի մինչեւ ի քուն ոմն էր, յայտալ իսովորութեան զգալ, քանդի ոսոխ էր ունդացն ձայն խորդմուն՝ յորձամ խորագոյն գլացելոյն յիկն. քանքի փակեցելոյ կարծեմք քերանցն, և այլոց զգայութեանցն արգելեաց՝ ի ձեռն արեգանցն շունկն գնալով նեղի. և նեղեալ նշնայն, նեղ և նուոր փողոցն յորձամ լցցի շնչով՝ սուշէր. արդ, փողոցն այսպէս այս սիրելի է. իսկ մարգարէն ոչ իբրեւ ի բնութեանէն բունդատեալ խորդայր, որչափ Թէ ի դաւ տաստանէն՝ յանդիմանորչան մեղացելոյն կուլեցեալ »:

« Եւ գարրոցեալ մարգարէն, և ի վերայ նաւին ողին եղեալ, նստն զանկ ձկերայնոյն, և զայնացն կոստակորչանն, զհողմոցն զրոնուրչանն. զհակամուծն մարգարէն, զլաւուն մանկանց. սակաւ միջոցաւ ամենեցուն ոգիքն ի մահ արգելեալ փակեալ կային... »:

Էջ 584. « Իսկ նաւին առաւելորդ զաղօրս ի մեղացն արգելեալս տեսանէն... և զխտով. ծովուն՝ ի խոյզ իարաքանկիւր գործոցն դիմելն, և զլայնս պահանջելով զհամարս պարտեացն կենայն փոխել, և ելեալ առ մարգարէն՝ զվառոցն խնդրիկն զքննորչանն. դո՞ ո՞ւրսն, և ոչստի՞ տես մեզ եկիր... Եւ նաւաղացն ի քննութեան յուզի խաղիք, և ի խնդրոյն գաւանի վիճակ, և վիճակէն մատնի կապեալ՝ որ ի մարդ կանէն անգիտանայր »:

« Իսկ մեք (սսեն նաւավարքն) ոչ իբրեւ սպանուան, ու՞մ մարդ, և ոչ իբրեւ ումանք որդ վայրենիք են քննորչանք՝ խողխողոցն մարդոյ տեսանել ծարաւի եւջ, այլ այս որ ըստ վաւեալ պահէ զմեզ չարս, կամիմք զատանել: Արդ զի՞նչ միաց. վիճակաւ արանց քարնպարտաց՝ Աստուծաւ գաւառաւոր լինի... »:

« Եւ մինչեւ զողոր մարգարէն, ձգեաց յինքն իբրեւ զունկ կիստսին. քանդի եւ իբրեւ ի ձեւ զուանացելոյ իմն որովայնէ՝ պղնձի իմն ձեղնորչանքն և երկաթի որովայնք ընդունեալ ծածկիմ և զամենայն աշխարհ գիտեմ, ոչ յարժեղով... և քննել յարժեղուն՝ իբրեւ կառ իմն քաղաւորի: Եւ տեսի զանդեղոցն զունկ գուլեւաքեալ աւաք, զայն՝ որ ի միջոցի արմատացեալ էին յալիս վիճիկ... զկայստն ծովայնոց, զանաւաքնութիւնս կեղեանեացն ձեռոց »:

« Եւ կիստսին ալոք իբրեւ տար իմն և նորոգ տեսի զայլաւոր... »:

« Եւ վերջ ունի ծովուն ի ներքոյ կայր անդեղոցն տատանելով զանդի... և զեկարաւայն ընդդէմ կացոցեալ զիս մարմինն յորձանին, և զերկաթն զնեղմանն ծածկեր գտնելիս, զորին յարդոյր անդիկիւր քաղմեալ. այնպիսի ի վեր թղթիլ քոյ տեսեալ յորձանին, որչափ

« Այլ և նշոյն գազանն գործակից լինէր մարգարէին պահաւոր և աղաքաբոյր. զի զայն երես առաւելս ոչինչ շաշակէր, և պատրաստէր զլեզունն փոխ տալ մարգարէին յաղաքելուն. զի բան մարգարէին իբրև կտնդայ(ոց) բախէր զլեզուն կրտսային և իբրև զքնար ձնլեզուցանէր զաղի ազետս ողորոյն առ Աստուած... և մարգարէանայ զվերաբերելն իւր ի խորոց անդնդոց, և ի միջոյ ժանեանց ի վեր կորզիլ՝ աստուածային անյաղորդաբերանքն »:

զիւրին էր նմա մարմնոյն լինել... և շոքոր հոսելով զերկրաւ՝ ոչ ժովացոյց զցամար »:

« Արդ, վասն զի մարգարէն՝ ձեռով ի կրտսային պահնցեալ լինէր. և գործով յարոյն Աստուծոյ պահպանեցեալ լինէր, աղօրս ի կրտսային առնէ... և զքերան գազանին յաղօրս ի վար առնու: Եւ էր տեսանել պատշէյն նորագործ քաւիտոս եղեպ յաղազս փրկութեան մարգարէին և կրտսն զքերանն երաց յեղս աղօրակերոտեան, և զլեզուն փոխ տոնեալ ի բանից քարառս, զորեւ գործոյ երաժշտականի յարունս. տագնտէն նոսազ մատին ի մարգարէէն քաւիտեցեալ »:

Հ. Բ. Ս.

Հ Ա Ն Ք

ՅԻ ԻՐԵՆԵ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹԻՒՆՆ

(Շար. տես յէջ 16)

Արիւնակուն

ԱՐԻՍՏՈՒՆ ԵՐ ռուսացական բառ մ'է, որ Հ. Մէնէվիշեանի Հանգարանութեան մէջ սեփականուած է կարմրագոյն ազնիւ մարմարին մը. գղ. կը կոչուի Griotte de Languedoc, կամ պարզ, Griotte, որուն Հ. Քալուսի Քալաքար [բալի = վիշնէ գունով քար] առելի ընտիր և ներդաշնակ անունը սեփականեմ է:

Արծաթ

Յետ ոսկւոյ ամենէն յարգի և ազնիւ հանքն համարուած է: Մեր օտարէն փոխառեալ ռուսացական բառերէն մին ալ Արծաթն է, բայց թէ որ ազգէն փոխառեալ կամ տառադարձեալ է, վճռելն դժուարին է, եթէ ոչ հմտագունից՝ զոնէ ինչ համար: Մոյն բառը զանազան ազգաց մէջ՝ յոմանս նոյնաձայն և յայլս տարաձայն յորոգրումն ունի. զոր օրինակ, անգղ. Silver, սպան. Plata, թրք. Լիսըս հիւսկիս, երբ. ԴՊՅ, գերմ. Silber, օրոք տարաձայն կը համարուին բաղադատմամբ ին. ձրարոսն = արդիւրս, լատ. Argentum, իտ. Argento, գղ. Argent, բառերուն: Բացորոշ

կը տեսնուի թէ՛ մեր Արծաթ բառը՝ Հնչմամբ խիստ մերձաւոր է՝ ի վերջոյ յիշուած համա-Հնչակ և հոմանիշ բառերուն, որոնք եւս չեն նոյն ընտիր և լուսատեսիլ հանքին արմատական բառն, այլ գողցուած Հնագոյն Կեղտ. կամ Սանսկրիտ և կամ Զէնտ բառէն. և ըսածնուս անշուշտ զօրեղ ապացոյց մի կ'ըլլան Հետեւեալ տողերն:

Զէնտ լեզուով արծաթն կոչի օրօշատ, յն. ինչպէս ռախը, ձրարոս արդիւրս. ըստ Պիւս. Նուֆի կը կարծուի՝ թէ այս բառերն ունեցած են արմատական մը այլ արի, որ կը նշանակէ սպիտակ, և նաեւ սանսկրիտ լեզուի մէջ կը գտնուի արիւմա, այլապէս, որ սպիտակ կը նշանակէ, և յունարէնի մէջ ձրարոս, արդոս = սպիտակ: Ուստի հաւանական կ'երեւի որ արծաթը սպիտակ ըլլալով, իւր անունն առած ըլլայ յիշեալ այլ (սպիտակ) արմատականէն [Նայա կարծեաց նպաստաւոր չէ՝ ինչ քիմիագիտաց՝ արծաթին յուսիմ ռախը, իբր սպիտակ լուսաւոր հանք մը]: Մոյն բառին նկատմամբ նմանօրինակ մեկնութիւն կու տայ լատ. ընդ. արծակ բառարանն իր (Lexicon Aegidii Forcellini. Prati, tipis aldinianis). ըստ այս հմտալից և հեղինակաւոր բառարանին, լատ. Argentum, որով է ին. ձրարոս հոմանիշ բառերն, ունեցած են իբրեւ իրենց արմատական՝ սանսկրիտ այլ արք բառը, որ փայլի կը նշանակէ, ուստի և արեւ արիւ. Գաղղիացի մեծ բառագէտն (Պէշլէ) ուրիշ մեկնութիւն կու տայ, և կը համարի թէ այս բառերուն արմատականն ըլլայ կեղտական. «Argent օտ. celt., ար article; cand օտ composition gaud, blanc; d'ou en lat, argentum, և այլն»: Բայց մէկգիթ թողով այս բառի լատ. յն. կամ զաղղ. ստուգաբանութիւնն, մենք մեր արծաթ բառի ա.